# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Հովտաշեն

«05» դեկտեմբերի 2016թ
№ 31

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝
Հ.ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիմոնյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի դրույթի համաձայն՝ կից ներկայացվում են ՀՀ Շիրակի մարզի Հովտաշենի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 12-Ա, 13-Ա, 14-Ա, 15-Ն և 16-Ն որոշումները:

Առդիր՝ 17 թերթ:

Հարգանքներով՝

*Համայնքի ղեկավար՝* *Ս.Փիլոյան*

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 12262.16
05. 12. 16թ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12-Ա

«28» նոյեմբերի 2016 թվական — գյուղ Հովտաշեն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 12-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովտաշեն համայնքի ղեկավարի 2017 թվականի վարձատրության չափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի աշխատավարձի նկատմամբ 15,11%-ի չափով՝ 100000 (մեկ հարյուր հազար) դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովտաշեն համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովտաշենի համայնքի ղեկավարի 2016 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանելու և համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 12-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 12-Ա որոշումը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կ.ՋԱՏԻԿՅԱՆ՝ կողմ

Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ կողմ

Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝ կողմ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ կողմ

Ա.ՄԵԼՔՈՆՅԱՆ կողմ

*Հովտաշենի համայնքի ղեկավար՝* *Ս.Փիլոյան*

«28» նոյեմբերի 2016 թվական
գյուղ Հովտաշեն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ  ԹԻՎ  13-Ա

«28» նոյեմբերի  2016 թվական  գյուղ Հովտաշեն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14 -Ի ԹԻՎ 13-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովտաշենի համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովտաշենի համայնքապետարանի աշխատակազմի 2017 թվականի աշխատակիցների քանակը՝ 3 /երեք/:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովտաշենի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովտաշենի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովտաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2016 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչփերը հաստատելու և համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 05-ի թիվ 13-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 13-Ա որոշումը:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | | |
|---|---|---|
| Կ.ԶԱՏԻԿՅԱՆ՝ | կողմ | ------------------- |
| Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ | կողմ | ------------------- |
| Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝ | կողմ | ------------------- |
| Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ | կողմ | ------------------- |
| Ա.ՄԵԼՔՈՆՅԱՆ | կողմ | ------------------- |

*Հովտաշենի համայնքի ղեկավար՝* *Ս.Փիլոյան*

«28» նոյեմբերի  2016 թվական
գյուղ Հովտաշեն

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Հովտաշենի համայնքի
ավագանու 2016 թվականի նոյեմբերի
28 -ի թիվ 13-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%) | Սահման-ված դրույքը | Սահմանված դրույքաչափը (դրամ) | | Ընդամենը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Համայնքային ծառայության պաշտոններ* | | | | | | | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար /ծածկագիր՝1.2-1/ | 1 | 79000 | 79,0 | 1 | 79000 | | 79000 |
| 2 | 1-ին կարգի մասնագետ /ծածկագիր՝2.3-1/ | 1 | 78000 | 78,0 | 1 | 78000 | | 78000 |
| *Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ* | | | | | | | | |
| 3 | Գրադարանավար | 1 | 74000 | 74,0 | 1 | 74000 | | 74000 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **3** | **231000** | **-** | **3** | **231000** | | **231000** |

*Հովտաշենի համայնքի ղեկավար* *Ս.Փիլոյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 14-Ա

«28» նոյեմբերի 2016 թվական                    գյուղ Հովտաշեն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովտաշենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովտաշեն համայնքի սեփականության 2016 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կ.ՋԱՏԻԿՅԱՆ՝ կողմ ------------------
Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ կողմ ------------------
Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝ կողմ ------------------
Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ կողմ ------------------
Ա.ՄԵԼՔՈՆՅԱՆ կողմ ------------------

*Հովտաշենի համայնքի ղեկավար՝* *Ս.Փիլոյան*

«28» նոյեմբերի 2016 թվական
գյուղ Հովտաշեն

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Հովտաշենի համայնքի
ավագանու 2016 թվականի նոյեմբերի
28-ի թիվ 14-Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| Ч/Ч | Գույքի անվանումը | Չափի միավոր | Քանակ | Միավորի արժեքը /հազ.դրամ/ | Հաշվեկշռային ընդհանուր արժեքը /հազ. դրամ/ | Գույքի տեխնիկական վիճակի նկարագիրը |
|---|---|---|---|---|---|---|
| *Համայնքապետարանի գույք* | | | | | | |
| 1 | Գրասեղան | Հատ | 1 | 50.0 | 50.0 | Նորմալ վիճակում է |
| 2 | Սեղան | Հատ | 1 | 60.0 | 60.0 | Նորմալ վիճակում է |
| 3 | Աթոռներ | Հատ | 6 | 5.0 | 30.0 | Նորմալ վիճակում է |
| 4 | Երկաթյա կասսա | Հատ | 1 | 70.0 | 70.0 | Նորմալ վիճակում է |
| 5 | Փոքր սեղան | Հատ | 1 | 30.0 | 30.0 | Նորմալ վիճակում է |
| *Գրադարանի գույք* | | | | | | |
| 1 | Գրասեղան | Հատ | 1 | 60.0 | 60.0 | Նորմալ վիճակում է |
| 2 | Ցուցափեղկ | Հատ | 1 | 70.0 | 70.0 | Նորմալ վիճակում է |
| 3 | Մանկական սեղան | Հատ | 1 | 30.0 | 30.0 | Նորմալ վիճակում է |
| 4 | Աթոռներ | Հատ | 10 | 5.0 | 50.0 | Նորմալ վիճակում է |
| 5 | Գրադարակներ | Հատ | 6 | 60.0 | 60.0 | Նորմալ վիճակում է |
| 6 | Գրքեր | Հատ | 2300 | | | Նորմալ վիճակում է |

*Հովտաշենի համայնքի ղեկավար՝* Ս.Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 15-Ն

գյուղ Հովտաշեն

«28» նոյեմբերի 2016 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 15-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովտաշենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովտաշենի համայնքի վարչական տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանել՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովտաշենի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովտաշենի համայնքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 05-ի թիվ 15-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 15-Ն որոշումը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | | |
|---|---|---|
| Կ.ՋԱՏԻԿՅԱՆ՝ | կողմ | |
| Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ | կողմ | |
| Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝ | կողմ | |
| Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ | կողմ | |
| Ա.ՄԵԼՔՈՆՅԱՆ | կողմ | |

*Հովտաշենի համայնքի ղեկավար՝* *Ս.Փիլոյան*

«28» նոյեմբերի 2016 թվական
գյուղ Հովտաշեն

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 15 -Ն ՈՐՈՇՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասը հազար դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսան հազար դրամ,

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ.

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով

...ված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական ...կության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ...ղլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական ...շանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է երկու հազար դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երկու հազար դրամ.

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ տաս հազար հինգ հարյուր դրամ.

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ տասներեք հազար հինգ հարյուր դրամ.

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ քսան հազար հինգ հազար դրամ.

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ քսանհինգ հազար մեկ դրամ.

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ քառասունհինգ հազար մեկ դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երկու հազար դրամ:

) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ ական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի մար՝ տաս հազար մեկ դրամ:

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ տասնչորս հազար դրամ:

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ քսանչորս հազար դրամ:

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երեսունչորս հազար դրամ:

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ հիսունչորս հազար դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է երեսուն հազար դրամ.

5) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ:

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասչորս հազար դրամ

ե) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասութ հազար դրամ

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանչորս հազար դրամ

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուներկու հազար դրամ

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար դրամ

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար տասչորս հազար դրամ

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասվեց հազար դրամ

6. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար գանձվում է տուրք հետևյալ դրույքաչափերով՝

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ մեկ հարյուր դրամ

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ մեկ հազար դրամ.

3) մեկ շաբաթվա համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

4) մեկ ամսվա համար՝ տասը հազար դրամ.

5) մեկ տարվա համար՝ հիսուն հազար դրամ:

7. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ հիսուն հազար դրամ:

8. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.

) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.
4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երեք հարյուր հազար դրամ.
6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ.

դ) սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ

9.1 Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ մեկ հարյուր քսանհինգ դրամ:

9.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար հիսուն դրամ

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հազար դրամ:

11. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում հիսուն հազար դրամ:

12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հինգ հազար դրամ:

13.Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հինգ հարյուր հազար դրամ:

14. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝

ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝հինգ միլիոն դրամ,

գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝յոթ միլիոն դրամ,

դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝տասը միլիոն դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման,շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար վճար սահմանել՝ հինգ հազար դրամ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝տասը հազար դրամ:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝երկու հազար դրամ:

4. Աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող եւ (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական մեկ հարյուր դրամ,

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսանհինգ դրամ.

2) ոչ կենցաղային եւ խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ մեկ հազար դրամ,

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ հինգ հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ՂՈՒՉՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16 -Ն

«28» նոյեմբերի 2016 թվական — գյուղ Հովտաշեն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովտաշենի համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովտաշենի համայնքի 2017 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կ.ՋԱՏԻԿՅԱՆ՝ կողմ

Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ կողմ

Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝ կողմ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ կողմ

Ա.ՄԵԼՔՈՆՅԱՆ կողմ

*Հովտաշենի համայնքի ղեկավար՝* *Ս.Փիլոյան*

«28» նոյեմբերի 2016 թվական

գյուղ Հովտաշեն

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Հովտաշեն համայնքի 2016թ-ի նոյեմբերի 28-ի թիվ
16-Ն որոշման

# ՀԱՎԵԼՎԱԾ 1

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

(հազար դրամով)

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300) | | 5,863.2 | 5,863.2 | 0.0 |
| 1100 | 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ<br>այդ թվում՝<br>(տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160) | 7100 | 2,020.2 | 2,020.2 | X |
| 1110 | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112)<br>այդ թվում՝ | 7131 | 1,250.0 | 1,250.0 | X |
| | | 7136 | 770.2 | 770.2 | X |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից | | 770.2 | 770.2 | X |
| 1121 | այդ թվում՝ Գույքահարկ փոխադրամիջոցների համար | | | | |
| 1210 | 2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից<br>այդ թվում՝ | 7311 | 3,500.0 | 3,500.0 | X |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390) | 7400 | 343.0 | 343.0 | 0.0 |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334) | 7415 | 331.0 | 331.0 | X |
| 1331 | այդ թվում՝Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | | 331.0 | 331.0 | X |
| 1351 | Տեղական վճարներ<br>այդ թվում՝ | | 12.0 | 12.0 | X |

ՀԱՏՎԱԾ 2

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամներով)

| 1 | 2 | 3 | 4 | 5 | Ընդամենը (ս.7 + ս8) 6 | այդ թվում վարչական բյուջե 7 | այդ թվում ֆոնդային բյուջե 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2000 | X | X | X | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող2500+տող2600+ տող2700+տող2800+տող2900+տող3000+տող3100)** | **5,863.2** | **5,863.2** | **0.0** |
| 2100 | 01 | 0 | 0 | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ** (տող2110+տող2120+տող2130+տող2140+տող2150+տող2160+տող2170+տող2180) | **4,682.2** | **4,682.2** | **0.0** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2110 | 01 | 1 | 0 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ | 4,682.2 | 4,682.2 | 0.0 |
| 2111 | 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | 4,682.2 | 4,682.2 | |
| 2500 | 05 | 0 | 0 | **ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ** (տող2510+տող2520+տող2530+տող2540+տող2550+տող2560) | **250.0** | **250.0** | **0.0** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2510 | 05 | 1 | 0 | Աղբահանում | 250.0 | 250.0 | 0.0 |
| | | | | որից՝ | | | |
| 2511 | 05 | 1 | 1 | Աղբահանում | 250.0 | 250.0 | |
| 2800 | 08 | 0 | 0 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող2810+տող2820+տող2830+տող2840+տող2850+տող2860) | **381.0** | **381.0** | **0.0** |
| 2820 | 08 | 2 | 0 | Մշակութային ծառայություններ | 381.0 | 381.0 | 0.0 |
| | | | | որից՝ | | | |
| 2824 | 08 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | 381.0 | 381.0 | |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող3110) | **450.0** | **450.0** | **0.0** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 3110 | 11 | 1 | 0 | ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ | 450.0 | 450.0 | 0.0 |
| | | | | որից՝ | | | |
| | | | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 450.0 | 450.0 | |

## ՀԱՏՎԱԾ 3

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամներով)

| տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող4050+տող5000+տող 6000) | | 5,863.2 | 5,863.2 | |
| | այդ թվում՝ | | | | |
| 4050 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ | x | 5,863.2 | 5,863.2 | 0.0 |
| | այդ թվում՝ | | | | |
| 4100 | 1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (տող4110+տող4120+տող4130) | x | 4,200.0 | 4,200.0 | X |
| 4111 | -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 4,200.0 | 4,200.0 | X |
| 4212 | -Էներգետիկ ծառայություններ | 4212 | 50.0 | 50.0 | X |
| 4213 | -Կոմունալ ծառայություններ | 4213 | 250.0 | 250.0 | X |
| 4221 | -Ներքին գործուղումներ | 4221 | 20.0 | 20.0 | X |
| 4238 | -Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 381.0 | 381.0 | X |
| 4261 | -Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 50.0 | 50.0 | X |
| 4264 | -Տրանսպորտային նյութեր | 4264 | 362.2 | 362.2 | X |
| 4771 | -Պահուստային միջոցներ | 4891 | 450.0 | 450.0 | 0.0 |

# ՀԱՎԵԼՎԱԾ 1

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

(հազար դրամով)

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդված ի NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում՝ վարչական մաս | այդ թվում՝ ֆոնդային մաս |
|---|---|---|---|---|---|
| | | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | 2 | | | | |
| 1000 | **ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** (տող 1100 + տող 1200+տող 1300) | | **5,863.2** | **5,863.2** | **0.0** |
| 1100 | **1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ** այդ թվում՝ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160) | **7100** | **2,020.2** | **2,020.2** | X |
| 1110 | 1.1 Գույքային այդ թվում՝ հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112) | **7131** | **1,250.0** | **1,250.0** | X |
| 1120 | **1.2 Գույքային հարկեր այլ գույքից** | **7136** | **770.2** | **770.2** | X |
| 1121 | այդ թվում՝ Գույքահարկ փոխադրամիջոցների համար | | 770.2 | 770.2 | X |
| 1210 | **2.1 Ընթացիկ** այդ թվում՝ **արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից** | **7311** | **3,500.0** | **3,500.0** | X |
| 1211 | Համայնքի բյուջե այդ թվում՝ մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով | | 3,500.0 | 3,500.0 | X |
| 1300 | **3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390) | **7400** | **343.0** | **343.0** | **0.0** |
| 1310 | **3.1 Տոկոսներ** այդ թվում՝ | **7411** | **0.0** | X | **0.0** |
| 1320 | **3.2 Շահաբաժիններ** | **7412** | **0.0** | **0.0** | X |
| 1321 | այդ թվում՝ Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության | | 0.0 | | X |
| 1330 | **3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ** (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334) | **7415** | **331.0** | **331.0** | X |
| 1331 | այդ թվում՝ Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | | 331.0 | 331.0 | X |
| 1351 | Տեղական այդ թվում՝ վճարներ | | 12.0 | 12.0 | X |